

Գրանցված է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2015 թվականի հունվարի 29-ին
Պետական գրանցման համարը 3001522



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 9-Ն

ք.Ստեփանակերտ

**ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՐՏԱԴԻՐ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ
ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՄ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔԻՑ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՁԱԿՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՄՇՏԱԿԱՆ
ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐՈՒՄ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ
ԵՎ ԴՐԱՆ ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 8-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է**:

Սահմանել համապետական ընտրությունների ժամանակ պարտադիր ժամկետային զինծառայությունից կամ վարժական հավաքից օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր արձակված զինծառայողի մշտական բնակության վայրերում ընտրողների ցուցակում ընդգրկվելու հայտի ձևը և դրան կից փաստաթղթերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ս. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՎԱՐՈՂ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ

Հ Ա Յ Տ
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ

Ես՝ _____
անուն, հայրանուն, ազգանուն

պարտադիր ժամկետային զինձառայությունից (վարժական հավաքից)
(ընդգծել)

օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր արձակված եմ, գտնվում եմ իմ
մշտական բնակության վայրում.

_____ :
բնակության վայր

Համապետական ընտրություններին մասնակցելու համար խնդրում եմ ինձ ընդգրկել իմ
բնակության վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:

Կից ներկայացնում եմ ժամկետային զինձառայությունից (վարժական հավաքից)
օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր արձակված լինելու մասին փաստաթղթի
պատճենը:

Դիմող՝ _____
ստորագրություն

օր, ամիս, տարեթիվ

Պահանջը բավարարվում է, եթե դիմումատուն բնակվում է մինչ զինձառայության մեկնելը իր
հաշվառման վայրում:

Հայտի ձևը տրամադրում է լիազոր մարմինը:

ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ